

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությունը եւ Ղազախստանի Հանրապետության մշակույթի, տեղեկատվության եւ սպորտի նախարարությունը, այսուհետ՝ Կողմեր, հաստատելով մշակութային եւ գիտական կապերի զարգացման կարելիությունը, հաշվի առնելով արխիվային գործի բնագավառում փոխշահավետ համագործակցություն հաստատելու մտադրությունը, ընդունելով, որ արխիվային տեղեկատվության մատչելիությունը մարդու հիմնական իրավունքներից մեկն է, հաշվի առնելով արխիվային տեղեկատվության օգտագործման բնագավառում ԱՊՀ մասնակից պետությունների փոխգործակցության սկզբունքների ու ձեւերի մասին 1999 թվականի հունիսի 4-ին Մինսկ քաղաքում կնքված Համաձայնագրի դրույթները,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈՂՎԱԾ 1

Սույն Համաձայնագրի իրականացումը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության անունից իրականացնելու է Հայաստանի ազգային արխիվը, Ղազախստանի Հանրապետության մշակույթի, տեղեկատվության եւ սպորտի նախարարության անունից՝ Ղազախստանի Հանրապետության մշակույթի, տեղեկատվության եւ սպորտի նախարարության տեղեկատվության եւ արխիվների կոմիտեն:

ՀՈՂՎԱԾ 2

Կողմերը համագործակցությունը զարգացնում են հավասարության եւ փոխադարձության հիման վրա՝ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին ու նորմերին, մշակույթի եւ արխիվային գործի բնագավառում Կողմերի պետությունների ազգային օրենսդրություններին համապատասխան:

ՀՈՂՎԱԾ 3

Կողմերը պայմաններ են ստեղծում իրենց ենթակայության պետական արխիվներում պահվող, համապատասխանաբար, Հայաստանի Հանրապետության եւ Ղազախստանի Հանրապետության ժողովուրդների պատմության մասին տեղեկատվություն բովանդակող փաստաթղթերի հայտնաբերման, պահպանման եւ լայնորեն օգտագործման համար:

ՀՈՂՎԱԾ 4

Կողմերն աջակցում են Հայաստանի Հանրապետության եւ Ղազախստանի Հանրապետության ուսումնասիրողներին Կողմերի պետական արխիվներում պահվող փաստաթղթային ժառանգությունը ուսումնասիրելու գործում: Կողմերից յուրաքանչյուրը մյուս Կողմի ուսումնասիրողների համար ապահովում է արխիվային ֆոնդերի եւ դրանց տեղեկատու-որոնողական համակարգի, ինչպես նաեւ հրապարակված եւ չհրապարակված տեղեկատու նյութերի մատչելիություն՝ Կողմերի պետությունների ազգային օրենսդրությանը համապատասխան:

ՀՈՂՎԱԾ 5

Ազգային արխիվային հավաքածուների համալրման նպատակով Կողմերը միմյանց աջակցում են, Կողմերի պետությունների ազգային օրենսդրություններին համապատասխան, արխիվային փաստաթղթերի հայտնաբերման ու պատճենահանման կազմակերպման եւ դրանց պատճենները միմյանց տրամադրելու գործում:

#### ՅՈՒՐԱԿՐԻ 6

Կողմերը երկկողմ պայմանագրերի հիման վրա իրականացնում են արխիվային փաստաթղթերի հրապարակման, փաստաթղթերի ցուցահանդեսների կազմակերպման, համաձայնեցված թեմատիկայով գիտական հետազոտությունների համատեղ ծրագրեր:

#### ՅՈՒՐԱԿՐԻ 7

Կողմերն իրենց իրավասությունների շրջանակներում փոխանակում են տեղեկատվություն, օրենսդրական ակտեր, նորմատիվ մեթոդական փաստաթղթեր արխիվային գործի եւ փաստաթղթաշրջանառության համակարգի զարգացման բնագավառում, արխիվագիտության, հնագիտության եւ փաստաթղթավարության հարցերի մասին գրականություն, ինչպես նաեւ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող արխիվային փաստաթղթերի հրապարակումներ:

#### ՅՈՒՐԱԿՐԻ 8

Կողմերը երկկողմ պայմանագրերի հիման վրա արխիվային գործի եւ փաստաթղթաշրջանառության բնագավառում իրականացնում են փորձագետների եւ մասնագետների փոխանակում:

#### ՅՈՒՐԱԿՐԻ 9

Կողմերն արխիվային փաստաթղթերի հիման վրա աջակցում են մյուս Կողմի պետության քաղաքացիների եւ կազմակերպությունների սոցիալ-իրավական հարցումների կատարմանը:

#### ՅՈՒՐԱԿՐԻ 10

Սույն Համաձայնագիրը չի շոշափում Կողմերի մասնակցությամբ այլ միջազգային պայմանագրերով ստանձնած նրանց իրավունքները եւ պարտականությունները:

#### ՅՈՒՐԱԿՐԻ 11

Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել եւ լրացվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Բոլոր փոփոխությունները եւ լրացումները ձեւակերպվում են արձանագրություններով, որոնք կազմում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը: Լիազոր մարմինների անվանումների եւ իրավասությունների փոփոխության դեպքում Կողմերը այդ մասին միմյանց տեղեկացնում են դիվանագիտական ուղիով:

#### ՅՈՒՐԱԿՐԻ 12

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման կամ կիրառման ժամանակ վեճեր եւ տարաձայնություններ առաջանալու դեպքում Կողմերը դրանք կլուծեն բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով:

#### ՅՈՒՐԱԿՐԻ 13

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին հայկական կողմի գրավոր ծանուցումը դազախական կողմից ստացվելու օրվանից:

Համաձայնագիրը կնքվում է հինգ տարի ժամկետով եւ ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդ հնգամյա ժամանակամիջոցներով, եթե Կողմերից ոչ մեկը Համաձայնագրի ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան վեց ամիս առաջ մյուս Կողմին գրավոր չծանուցի դրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին: Սույն Համաձայնագրի գործողության դադարեցումը չի ազդի սույն Համաձայնագրի դրույթների հիման վրա համաձայնեցված եւ նրա գործողությունը դադարեցնելու պահի դրությամբ անավարտ մնացած նախագծերի եւ ծրագրերի կատարման վրա:

Կատարված է Երեւան քաղաքում, 2005 թվականի հոկտեմբերի 12-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, դազախերեն եւ ռուսերեն. ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են:

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման ժամանակ տարաձայնություններ առաջանալու դեպքում Կողմերը դիմելու են ռուսերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2006 թ. մարտի 20-ից: